Տնային առաջադրանքների փաթեթ

Հաշիվ և թիվ: Բնական թվեր

1. Ո՞ր թիվն է հաջորդում 148579 թվին:

2. Ո՞ր թիվն է նախորդում 48547 թվին:

3. Համեմատի՛ր.

- 9999 և 9998
- 1001000 և 1001000
- 375648 և 385648
- 89337658 և 3321002567
- 111111 և 11112

4. Նարեկը, կարդալով օրական 10 էջ, 6 օրվա ընթացքում կարդացել է գրքի կեսը: Քանի՞ էջ կա գրքում:

5. Արեգն իր մտապահած թիվը բազմապատկեց 3-ով, ստացված թվին գումարեց 7 ու արդյունքը բաժանելով 2-ի ստացավ 20: Գտնել Արեգի մտապահած թիվը:

6. Մի դպրոցում կա 217 աշակերտ, իսկ մյուսում՝ երկու անգամ ավելի: Երկրորդ դպրոցում որքանո՞վ ավելի աշակերտ կա, քան առաջինում: Ընդամենը քանի՞ աշակերտ կա երկու դպրոցներում: